

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

1.1.1. 2000թ. հունվար-հունիսի ՀՆԱ-ի ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալի աճը 2000թ. հունվար-հունիսին 1999թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 102.6 տոկոս՝ սույն տարվա նախորդ ժամանակաշրջանի (հունվար-մայիս) 101.3 տոկոսի դիմաց:

ՀՆԱ-ի աճը հանրապետությունում պայմանավորված է հիմնականում հետևյալ ճյուղերով՝ արդյունաբերության (ավելացված արժեքի աճի տեմպը՝ 102.9%), գյուղատնտեսության (103.7%), շինարարության (107.3%), առևտրի և հանրային սննդի (106.3%): Հարկ է նշել, որ ՀՆԱ-ի աճը 2000թ. հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ փոքր-ինչ դանդաղել է հարկային մուտքերի նվազման և սուբսիդիաների աճի հաշվին: Այսպես, համախառն ավելացված արժեքի աճը, հիմնական գներով, այսինքն առանց «ապրանքների և ներմուծման զուտ հարկերի (հանած սուբսիդիաներ)» բաղադրիչի ներառման, կազմել է 103.2 տոկոս: